

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

ОБЯЗАТЕЛЬНАЯ

КОНТРАКТНАЯ

КНИЖКА

**ԻՆՉՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԿԵՐՊՈՎ ԱՇԽԱՏԵԼ ԿՐԻՔԻ ՎՐԱ**

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԹՂԹԱԿԵՑՆԵՐԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ „ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

14 FEB 2018

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

**ԻՆՉՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԿԵՐՊՈՎ ԱՇԽԱՏԵԼ ԳՐՔԻ ՎՐԱ**

ՌԳՆՈՒԹՅՈՒՆ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Հայկական ԽՍՀ ԺԿՆ-ի հրատարակչություն
«Խորհրդային Հայաստան»

ՑԵՐԵՎԱՆ

1980

«ՀամԿ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացի» լույս ընծայումը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի վերոշումը՝ կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին, հսկայական հետաքրքրություն ստեղծեցին դեպի մարքսիզմ-լենինիզմի տիրապետումը, հետաքրքրություն մեր հայրենիքի աշխատավորության լայն մասսաների մեջ դեպի ինքնուրույն տեսական լուրջ ուսուցումը:

Որեցոր խորհրդային յերկրի ավելի ու ավելի մեծ թվով քաղաքացիներ դադավում են ինքնակրթութեամբ, բարձրացնում են իրենց քաղաքական ու ընդհանուր-կրթական մակարդակը:

Ահա թե ինչու գրքի վրա ինքնուրույն կերպով աշխատելու հարցերն այժմ ստանում են հատուկ նշանակություն:

Շատ ընկերներ գրքի վրա լուրջ, ինքնուրույն աշխատանքի ձեռնարկում են առաջին անգամ, դեռևս չունեն ինքնուրույն ուսուցման անհրաժեշտ ունակություններ և բնականաբար կարիք են զգում մեթոդական ոգնութեան:

Հենց այդ նպատակով ել-ինքնուրույն կերպով սովորել սկսողներին ոգնութեան ցույց տալու նպատակով—լույս է ընծայվում Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայայի գրած բրոշյուրը:



1-38669ր

ԻՆՉՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ
ԱՇԽԱՏՆԵԼ ԳՐԳԻ ՎՐԱ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՑ-
ՄԱՆ ՄԱՍԻՆ

Վոչ միայն յերեխաների, այլև հասակավորների համար անհրաժեշտ է սովորելը: «Գար ապրիլ, դար սովորիլ»,—ասում է հին ասացվածքը: Յեւ յուրաքանչյուր հասակավոր մարդ գիտե, թե ինչպիսի ուժ ունի գիտությունը: Մենք գիտենք, թե ինչպես ամբողջ կյանքի ընթացքում սովորել են այնպիսի մարդիկ, ինչպես Մարքոսը, Նեղելը, Լենինը, Ստալինը, թե վո՛րքան զրքեր են կարգացել նրանք իրենց կյանքի ընթացքում: Մենք գիտենք, թե վո՛րքան են սովորել ու՛ սովորում են խորհրդային ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները՝ բժիշկները, ազրոնոմները, ինժեներները և այլ մասնագետները:

Յեթե մարդ ապրեր միայն իր խելքով, նա կշարունակեր մնալ անողնակա՛ն, վայրենի վիճակում: Պատմությունը ցույց է տալիս, վոր մարդիկ մշտապես փոխանակում են իրենց փորձը, իրենց գիտելիքները, և մարդկությունը հազարամյակների ընթացքում կուտակել է հսկայական քանակությամբ գիտե-

լիքներ: Ժամանակակից գիտությունը—մեկ կամ մի քանի հանճարների, հատկապես խելոք, հատկապես տաղանդավոր, հատկապես շնորհալի մարդկանց հորինվածքը չէ: Գիտությունը—այդ մարդկության կուտակած գիտելիքների հսկայական մի դանձարան է:

Չկան այնպիսի մարդիկ, վորոնք կարողանան յուրացնել հազարամյակների ընթացքում մարդկության կուտակած գիտելիքների ամբողջ դանձարանը: Բայց անհրաժեշտ է տիրապետել ամենակարևորին, ամենանշականին այն ամենից, ինչ կուտակել է մարդկությունը գիտության ամենակարևոր ճյուղերում:

Նյութի ընտրության դործում հսկայական ուղնություն է ցույց տալիս մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելը:

«...թեորիան,— ասել է ընկեր Ստալինը,— ...պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, համոզմունք՝ աշխատանքի մեջ, հախտ գեպի մեր գործի հաղթանակը» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ՝ 299):

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացն» ամենահարուստ նյութ է տալիս սցիալիզմի համար մղված պայքարի ուսումնասիրման համար, ցույց է տալիս անցած ուղին, ցույց է տալիս, թե ինչպես մարքսիզմ-լենինիզմի թեորիան ծառայել և ծառայում է վորպես գործողության դեմք, ինչպես է նա ողնում թեորիան կապել պրակտիկայի հետ: Կուտակցության պատմությունը մեզ սովորեցնում է,

Թե պետք է դիտել կյանքը, ինչպես ողտազործել
Թեորիան հասկանալու համար, թե ինչ է կատար-
վում կյանքում:

1920 թվի հոկտեմբերին հանդես գալով կոմսո-
մոլի 3-րդ համագումարում, Լենինը յերիտասար-
դությանը կոչ արեց սովորել, մանրամասն կանգ ա-
ռավ այն հարցի վրա, թե ի՞նչ է ի՞նչպես պետք է
սովորել, թե ի՞նչպիսի հսկայական նշանակութուն
ունի ուսուցումը, թե այն ինչպես սերտորեն պետք
է կապված լինի կոմունիզմի կառուցման դործի հետ:
Լենինի այդ ճառը գետեղված է նրա յերկերի 30-րդ
հատորում: Անհրաժեշտ է, վորպեսզի վոչ միայն
յո՛ւրաքանչյուր կոմսոմոլիստ, այլև յուրաքանչյուր
կուսակցական, մեր սոցիալիստական պետության
յուրաքանչյուր քաղաքացի, կարգա այն և խորանա
նրա մեջ:

Լենինը միայն յերիտասարդությանը չէ, վոր ա-
սում էր ուսուցման անհրաժեշտության մասին: Յեր-
կու տարի գրանից հետո հանդես գալով (1922 թվի
նոյեմբերի 15-ին) Կոմունիստական Ինտերնացիոնալի
4-րդ կոնգրեսում (այդ ճառը տպված է Լենինի
յերկերի 27-րդ հատորում), Վլադիմիր Իլյիչը դիմե-
լով կոնգրեսի անդամներին, սոցիալիզմի համար
պայքարող առաջավոր մարտիկներին, ուսուներին և
ոտարերկրացիներին, ասաց սովորելու անհրաժեշ-
տության մասին:

Այն որվանից, յերբ Իլյիչն ասել է. այդ մասին,
չատ ժամանակ է անցել: ԽՍՀՄ-ի քաղաքացիներն
այդ տարիների ընթացքում համառորեն սովորել

են: Միլիոնավոր անգրագետներ դարգետ են դար-
ձել, կիսագրագետներ դարձել են լավ գրագետ, շա-
տերը վերջացրել են տասնամյա դպրոցների, տեխնի-
կումներ, ԲՈՒՀ-եր: Աճել է յերկրի ընդհանուր կուլ-
տուրականությունը: Բայց դեռ շատ բան պետք է
անել: Հարկավոր է մինչև վերջ լիկվիդացիայի յեն-
թարկել անգրագիտությունն ու կիսագրագիտությու-
նը, բոլորին ոգնել տիրապետելու դիտելիքներին՝
յոթնամյակի կամ միջնակարգ դպրոցի ծավալով,
լրացնել իրենց գիտելիքների մեջ յեղած բացերը:
Վորքան ավելի յե մարդ տիրապետում գիտելիքնե-
րին, այնքան ավելի լավ է նա սովորում ձեռք բե-
րած գիտելիքները կիրառել կյանքում, այնքան ավե-
լի յե նրա մեջ աճում սովորելու ցանկությունը: Յեվ
մենք տեսնում ենք, թե ինչպես գիտության ծարավը
ԽՍՀՄ-ի քաղաքացիների մեջ անչեղորեն աճում է:
Ստալինյան Սահմանադրությունը, ստախանովյան
չարժման աճումը, մեր սոցիալիստական շինարարու-
թյունը, միջազգային դրությունը, պատերազմի ըս-
պառնալիքը—այս բոլորն է՛լ ավելի յեն բարձրաց-
նում ձգտումը դեպի գիտելիքները:

Վերջերս միլիոնավոր տիրաժող լույս տեսած՝
«ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»,
վորը վառ կերպով լուսավորում է պայքարի ամբողջ
անցած ուղին, մեր ամբողջ ժողովրդի մեջ հսկայա-
կան հետաքրքրություն արթնացրեց դեպի մի շարք
կարևորագույն քաղաքական հարցեր: Յեվ իզուր չէ,
վոր այդպիսի հետաքրքրությամբ կարդում են կու-
սակցության պատմությունը, նորից են կարդում,

ուսումնասիրում են, քննարկում: Այդ հիանալի դիրքը հակայական դեր կխաղա Պորհուրգների յերկրի, սոցիալիստական հայրենիքի քաղաքացիների գլխակցությունը բարձրացնելու գործում:

Յերբ կարդում ես կուսակցության պատմությունը, վերանդ ուշադրություն ե դարձված ամենադժխտավորին, ապա յերևում ե, թե ինչպես են մեր հայրենիքի աշխատավորները քսյլ առ քայլ, Լենինի — Ստալինի կուսակցության ղեկավարութեամբ հասել սոցիալիստական շինարարութեան այն հաջողություններին, վորոնց վկա յենք հանդիսանում մենք: Հարկավոր ե, վորպեսզի յուրաքանչյուրը հասկանա, թե ի՞նչպես են ձեռք բերվել այդ նվաճումները ե ինչ՞ով են դրանք կայանում: Հարկավոր ե, վորպեսզի ժողովրդի ամենալայն մասսաները հասկանան, ուսումնասիրեն մեր մեծ կուսակցութեան պատմությունը:

«Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացը» լուսարանում ե անցած ուղին: Անցած ուղու հիման վրա, այն հարուստ փորձի հիման վրա, վոր ունի կուսակցությունը, մենք կչարժվենք առաջ, դեպի կոմունիզմի նոր հաղթանակներ:

Համկ(բ)Կ Կենտկոմի վորոչումը կուսակցական պրոպագանդայի վերաբերյալ, շատ բան ե ասում այն մասին, թե վորքան կարևոր ե դրքի վրա ինքնուրույն կերպով աշխատելու հմտությունը, վորքան կարևոր ե այն, վոր մարդ ինքնուրույն կերպով սովորի: «Մարքս-լենինյան թեորիային տիրապետելը — ձեռքբերովի գործ ե»: Այդ պարտավորեցնում ե մեզ

զինվել կուսակցութեան պատմութեան դասադրքի վրա, սկզբնաղբյուրների վրա, թերթի վրա ինքնուրույն կերպով աշխատելու հմտութեամբ: Ամենադժխտավորն ե — կարողանալ կարգացածի միջից առանձնացնել ամենակարևորը, եյականը, սովորել հասկանալ նյութը:

Ահա՛ թե ինչու այժմ հատուկ սրութեամբ ծառանում ե ինքնակրթութեան հարցը:

Պետք ե սովորել ինքնուրույն կերպով տիրապետել մարքսիզմ-լենինիզմի թեորիային:

Իլիչը 1919 թվին Սվերդլովսկի համալսարանում դասախոսութեանը եր կարդում պետութեան մասին: Նա այն ժամանակ ասում եր ունկնդիրներին, վոր կարող ե պատահել նրանց համար ամեն բան միանգամից հենց հասկանալի չլինի, այդ դեպքում չպետք ե շփոթվել, կյանքը դեռ շատ անգամ մեզ կվերադարձնի այդ հարցին, այն ժամանակ հարկավոր ե ուսումնասիրած նյութը նորից կարդալ կրկին ու կրկին անգամ ե շատ բան հասկանալի կլինի ավելի՛ լավ ու ավելի՛ խորը:

Յեկ ինքը՝ Իլիչը մշտապես նորից ու նորից եր կարդում Մարքսի — Ենգելսի յերկերը:

Կուսակցութեանն այժմ հատկապես ընդդժում ե ինքնուրույն, ինքնագործ աշխատանքի կարևորութեանը: Մեր յերկրում ստեղծված են բոլոր պայմանները ինքնուրույն ուսուցման համար:

Անհրաժեշտ ե բազմակողմանի ոգնութեան ցույց տալ ինքնակրթութեանը, ոչնեկ ինքնուրույն կերպով

դրքի, թերթի վրա աշխատելուն, դրանց ընթերցումից կորզել վորքան կարելի յե շատ բան:

Մեզ այդ բանին պարտավորեցնում ե նաև Համաիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը՝ «Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին, «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայման կապակցությամբ»:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԱՊԵԼ ՍԿՍՈՂՆԵՐԻՆ

1. Վորպեսզի ինքնակրթության պարապմունքները հաջող ընթանան, պետք ե ունենալ մի շարք ունակություններ—մտքի մեջ կարգալու սովորություն, կարգալ վոչ շատ դանդաղ, կարողանալ հասկանալ դրքից, թերթից, ուղեցույցից, զբաղարանային գրացուցակից, կարողանալ կարգացածից կատարել քաղվածքներ և ամենամանհրաժեշտ նշումներ:

2. Ինքնակրթական աշխատանքի հիմնական ձևն ե հանդիսանում սխտեմատիկ ընթերցանությունը: Կարգալիս պետք ե նկատի ունենալ հետևյալը.

Ավելի լավ ե կարգալ վոչ շատ, բայց հիմնավորապես: Գիրքը «կուլ տալն»—ամենամարտադրողական գրադմունքն ե:

Չափազանց մեծ նշանակություն ունի գրքի ընտրությունը:

Պետք ե պարզ պատկերացնել, թե ինչով ես ուզում պարապել: Պատահում ե այսպես, վոր մարդ ուզում ե սովորել առհասարակ, բայց թե կոնկրետ կերպով ի՞նչ, նա չգիտե: Ինչպես վոր կուտնտեսությունում, Փարբիկայում գործն ավելի լավ ե ընթանում, վորովհետև աշխատում են պլանով, այնպես ել ինքնակրթության ասպարիզում գործն ավելի լավ ե

ընթանում, յետե ինքնակրթությամբ զբաղվողն աշխատում է պլանով և վոչ թե թուշում և մեկ զբքից մյուսը:

3. Բայց դեռ քիչ է հաշիվ տալ, թե ինչով եռ ուզում պարապել, հարկավոր է կազմել պարապմունքների ուսումնական պլան: Պարապել սկսողը սովորաբար չգիտե վոչ այն գիտելիքները ծավալը, վոր նա ուզում է ձեռք բերել, վոչ սխտեմը, այսինքն այն կարգը, վորով նա պետք է ձեռք բերի գիտելիքները, չգիտե թե ինչը ինչից հետո կարգա:

Այստեղ կարող են շատ բանով ոգնել զանազան հանձնարարական ցուցակներ, ինքնակրթության ձեռնարկները, ծրագրերը, դասագրքերը: Բայց ամենից լավ է պարապմունքների սկզբում խոսել մի բանիմաց մաղու հետ, խորհուրդ կամ ինչպես ասում են կոնսուլտացիա ստանալ նրանից: Խորհուրդ տալ կարող է ուսուցիչը, զբաղարանատերը, կոնսուլտանտը, վորն այժմ սովորաբար հրավիրվում է գրադարան՝ ինքնակրթական աշխատանքում ոգնություն ցույց տալու համար, կամ կուսակցական կաբինետում գտնվող կոնսուլտանտը: Լավ խորհուրդ կարող է տալ մասնագետը՝ ազրոնմը, ինժեները, բժիշկը և այլն:

Կոնսուլտացիան կարևոր է հատկապես այն ժամանակ, յերբ պարապմունքները նոր են սկսվում և հաճախ վճռում է հետագա պարապմունքների հաջողությունը:

4. Ի՞նչպես պետք է պարապել:

ա) Չպետք է շտապել: Ինքնակրթության գործում շտապողականությունը հատկապես վնասակար է:

բ) Պետք է ուշադրություն դարձնել, վորպեսզի անհասկանալի տեղեր չմնան, պետք է անհասկանալի բաները փնտոել արմատական բառարաններում, հարցնել տեղյակ մարդկանց, խորհրդակցել կոնսուլտանտների հետ:

գ) Պետք է նորից կարդալ անցած նյութը, անպայման նորից կարդալ այն, ինչ կատարված է նախորդ պարապմունքի ժամանակ:

դ) Չի կարելի ընդմիջում տալ պարապմունքների մեջ, մանավանդ սկզբում, քանի դեռ անցած նյութը չի խորացել հիշողության մեջ: Պետք է պարապել կանոնավոր կերպով:

ե) Հիշողությանը շատ են ոգնում քաղվածքները: Յուրաքանչյուր գլուխ վերջացնելուց հետո, քանի դեռ կարդացածը թարմ է հիշողության մեջ, պետք է կարդացածից ամենակարևոր բաները գրի առնել տետրում:

5. Յեթե կարդացած գրքի մեջ մի վորեէ միտք հատկապես հետաքրքրում է կամ դուր է գալիս, այն նույնպես պետք է արտագրել տետրում: Լավ է, յերբ գրի յե առնվում հիշողությամբ, հետո համեմատվում է տեքստի հետ, ապա կրկին անդամ գրանցվում է ըստ հիշողության— արդեն ստույգ տեքստը: Այդ գարդացնում է ուրիշի մտքերը ստույգ կերպով հարդեյուռ ունակությունը, իսկ դա շատ կարևոր է:

Հարկավոր է տետրի մեջ գրի առնել նաև այն բոլորը, ինչ պետք է հիշել—իրադարձությունները թվականները, անունները, թվերը, անհասկանալի բառերի ու արտահայտությունների բացատրություն-

ները, քաղաքների անուները: Հարկավոր և հաճախակի կարող դրի առածը: Հարկավոր և դրի առնել հատակ, պարզ, վորպեսզի հետո անհրաժեշտ չլինի ժամանակ ծախսել դրի առածն ըմբռնելու համար:

6. Պետք է պահպանել այնպիսի պայմաններ, վորոնց ժամանակ ամենից ավելի հաջող կարող են ընթանալ պարապմունքները:

Ամենից ավելի լավ է պարապել այնպիսի ժամանակ, յերբ շատ հողմած չես, ինչպես ասում են «թարմ դլխով»: Ուստի, ամենից ավելի լավ է պարապել առավոտվանից, կամ հանդատանալուց հետո:

Ձի կարելի պարապել շատ վատ լուսավորության տակ, առթ, խիստ շոգ սենյակում. դժվար է պարապել, յերբ շուրջը բարձրաձայն խոսակցություն է տեղի ունենում, յերբ ամեն բոպե ուշադրությունը շեղվում է պարապմունքից:

Ամենից ավելի հարմար է պարապել այն ժամանակ, յերբ ձեռքի տակ կան անհրաժեշտ ուղեցույցներ, արմատական բառարաններ և այլն:

Ահա թե ինչու ամենից ավելի լավ է պարապել ընթերցարանում, դրադարանին կից ընթերցանության դահլիճում:

ԻՆՉՊԵՍ ԱՇՈՒՍԵԼ ԳՐՔԻ ՎՐԱ

Ամեն մի նյութի ուսումնասիրության հիմքում ընկած է աշխատանքը դրքի վրա:

Ուստի անհրաժեշտ է դրքի վրա աշխատել սովորել: Պետք է ձեռք բերել մտքում արագ կարգալու սովորություն և հասնել այն բանին, վոր ընթերցման մեխանիզմը դառնա միանգամայն ավտոմատիկ և մտքերը չչեղի:

Իսկայ միայն այդքանը քիչ է: Պետք է նաև սովորել հասկանալ կարգացածը: Դա արդեն պահանջում է վորոչ զարգացում, բառերի ու հասկացողությունների բավականաչափ պաշար:

Կարգացածի լավագույն ըմբռնումը ձեռք է բերվում կարգացողի զարգացման աճմանը դուրսնալուց: Սակայն պետք է սկզբից հենց աշխատել հաշիվ տալ իրեն այն մասին, թե ի՞նչ է հասկանալի և աշխատել ըմբռնել անհասկանալի բաները: Դրա համար ողտակար է լինում անհասկանալի բառը, արտահայտությունը, միտքը նորից կարդալ: Պետք է աշխատել ըմբռնել անհասկանալին՝ դիմելով ոտար բառերի բառարանին, ենցիկլոպեդիկ բառարանին, համապատասխան դասագրքի, շոչափված թեմայի վերաբերյալ համարմատչելի դրքի ոգնությանը և այլն: Յերբ պարզված է անհասկանալի բառի նշանակությունը, ողտա-

կար եւ արտադրել և հիշել այն ամբողջ Ֆրազը, վորի մեջ այդ բանը գործածված է, հորինել մի քանի Փըրազներ, վորտեղ հարկ լինի գործածել այդ բանը: Յես առիթ եմ ունեցել մի անգամ գիտելու Ն տարեկան մի աղջկա, վորն առաջին անգամն եր լուծւած վայրկյանս» բանը: Հաջորդ կես ժամվա ընթացքում նա զանազան կոմբինացիաներով տասն անգամ կրկնեց այդ բանը: Դեռահասակը կամ հասակավորը պետք է ընթանա նույն այդ ուղիով, վորպեսզի կատարելագուես յուրացնի մինչ այդ անհատկանալի բանը և սկսի գործածել այն, յերբ նրա կարիքը լինի: Հարկավոր է միայն հետևել, վոր բանի իմաստն ու յերանդն ըմբռնովի ստույգ կերպով և բանը չգործածվի այլ իմաստով:

Ի հարկե, անձանոթ արտահայտությունների ու բաների պարզաբանման այսպիսի աշխատանքն ընթերցողին չեղում է գլխավորից՝ զրքի մեջ շարադրված հիմնական մտքերը յուրացնելուց:

Ուստի, պետք է աշխատել, վորքան կարելի յե արագ տիրապետել զրական լեզվին:

Անհրաժեշտ է նաև սովորել հաշիվ տալ իրեն կարգացածի մասին: Ավելի լավ է այդ բանն անել վորոչ սխտեմով:

Ամենից առաջ, յերբ վերջացնում ես զրքի ընթերցումը, պետք է հաշիվ տաս քեզ, թե ի՞նչ է ուզում ասել հեղինակը, ի՞նչպիսի հիմնական մտքեր է նա զարգացնում իր զրքի մեջ, ի՞նչպիսի փաստարկումներ է նա բերում այդ հիմնական մտքերը պաշտպանելու համար: Սկզբում ավելի լավ է այդ բանն անել զրքի

յուրաքանչյուր գլխի վերաբերմամբ: Շատ կարևոր է պարզ պատկերացնել հեղինակի մտքի ամբողջ ընթացքը: Կարգացածի պարզ յուրացումն առաջին քայլն է զրքի գիտակցական ընթերցման գործում:

Կարող է պատահել, վոր առաջին հայացքից զժվար լինի յուրացնել այն բոլորը, ինչ ասում է հեղինակը: Այդ դեպքում հարկ է լինում զերբը կարգալ 2-րդ ու 3-րդ անգամ: Յերբ աշխատում ես ինքդ քեզ հաշիվ տալ կարգացածի մասին, հարկավոր չէ ընկնել բոլոր մանրամասնությունների հետևից, հարկավոր չէ աշխատել հիշել յուրաքանչյուր բանը: Հարկավոր է աշխատել կարգացածից դուրս բերել ամենաեյակա-նը, հիմնականը: Այնուհետև տեսնել, թե այդ եյականն ու հիմնականն ինչպես է ամրապնդվում մնացած նյութի միջոցով: Յերբեմն հիմնական միտքն իլյուստրացիայի յենթարկելու համար հեղինակը բերում է մի շարք փաստեր, յերբեմն իր միտքն ապացուցում է մի շարք դատողությունների միջոցով: Ամենից լավ է կարգացած զրքի վերաբերյալ զբավոր ձևով կազմել զրքի պլանը: Այս բոլորի մեջ հարկավոր է լավ վարժվել:

Այնուհետև, պետք է ըմբռնել զրքի բովանդակությունը: Յեթե հիմնական դադափարն իլյուստրացիայի յե յենթարկվում փաստերի միջոցով, ապա պետք է նախ տեսնել, թե դրանք ձի՞շտ են արդյոք շարադրվում, և յերկրորդ՝ արդյո՞ք բավականաչափ տրայիկ են:

Պետք է աշխատել ինքնուրույն կերպով վերհիշել, հավաքել նման կամ քրացուցիչ փաստեր: Պետք է

169986-1

մտածել նաև, թե չի՞ կարելի արդյոք հարցին մոտե-
նալ վորևէ այլ կողմից :

Գիրքը կարգալու ընթացքում պետք է նրանից
կատարել քաղվածքներ՝ արտագրել այն, ինչ պետք է
և ուզում ես հիշել, — իրադարձութունների թվակա-
նը, անունները, թվերը: Հաճախ ողտակար է լինում
վոչ միայն արտագրել թվերը, այլև նրանց հիման
վրա կազմել համապատասխան դիագրամաներ, հարցն
ավելի ակնառու կերպով պատկերացնելու համար:
Հարկավոր է նաև արտագրել դուր յեկամ մտքերը,
արտահայտութունները: Սակայն պետք է խուսափել
չափից դուրս յերկար քաղվածքներից, վորոնց հաս-
կանալը հետադաժում ավելի հեշտ չէ, քան թե հենց
դրքի հասկանալը: Պետք է արտագրել միայն ամենա
անհրաժեշտը՝ թեղիսների ձևով, պահպանելով ստո-
րագրածանունն ըստ մասերի և այլն: Հարկավոր է
դրել պարզ և հասկանալի:

Այնպիսի մեծածափալ տետրերից, վորոնց մեջ
դրքի շատ եջեր արտագրելու վրա ծախսված է վոչ
քիչ ժամանակ և վորոնցից գլուխ հանել չի կարող
նույնիսկ ինքը՝ տետրի տերը, ողուս քիչ կարելի յե
ստանալ: Բայց դրա փոխարեն չափազանց ողտակար
են սեղմ, պարզ գրված հասկանալի նշումներով տետ-
րերը, վորոնք հնարավորութուն են տալիս միանդա-
մից հենց հիշել կարդացածը և ըմբռնել թվական ու
ամեն տեսակի այլ նյութերը: Պետք է սովորել նշումը
կատարել հենց այդպիսի ձևով, ժամանակ չխնայելով
սկզբում վարժութունների վրա, սկսելով կարճ հոդ-
վածներից, աստիճանաբար սովորելով իր համար
նշումներ կատարելու հենց այդպիսի ողտակար յեղա-
նակը:

Ի հարկե, վորոչ ղեպքերում ողտակար է կատա-
րել նաև ավելի ընդարձակ քաղվածքներ: Յեթե դիրքն
ունի, որինակ, բացառիկ հետաքրքրութուն ու կարե-
վորութուն, այն ժամանակ ամսոս չէ ժամանակ
ծախսել նաև մանրամասն կոնսպեկտ կազմելու, յեր-
կար քաղվածքներն ամբողջապես արտագրելու վրա:

Դա պետք է անել, որինակ, այն ղեպքում, յերբ
յենթադրվում է ավյալ դիրքն ողտագործել ղեկուցման
կամ հոդվածի համար:

Ճիշտ այդպես էլ ողտակար է լինում ընդարձակ
քաղվածքներ կատարել այն ղեպքում, յերբ նա, ով
կատարում է քաղվածքներ, ղեռևս բավականաչափ չի
տիրապետել գրելու մեխանիզմին, ուղղագրությանը,
կամ ղրական լեզվին: Այդպիսի ղեպքերում արտագրե-
լը շատ ողտակար է: Յեվ ավելի լավ է արտագրել
այն, ինչ հետաքրքրում է և առնչութուն ունի կար-
դացածի հետ:

Բայց իբրև կանոն, ավելի լավ է նշումները կա-
տարել կարճ, սեղմ, ակնառու:

Այդպիսով, ընթերցանության ժամանակ առաջին
խնդիրն է իր համար պարզել և յուրացնել կարդացած
նյութը:

Յերկրորդ խնդիրը՝ կարդացածն ըմբռնելն է:

Յերկրորդ խնդիրն է — կարդացածից կատարել հի-
շողության համար անհրաժեշտ քաղվածքներ:

Յեվ վերջապես չորրորդ խնդիրն է — հաշիվ տալ
իրեն, թե կարդացած ղիրքն ի՞նչ նոր բան սովորեց-
րեց. ավե՞ց արդյոք վորևէ նոր ղիտելիքներ, սովո-
րեցրե՞ց արդյոք ղիտողության, աշխատանքի, պա-
լասմունքի վորևէ նոր յեղանակ, արթնացրե՞ց արդ-

յոք վորեւ նոր միաք, առաջացրե՞ց արդյոք վորեւ
հասուել արամադրութիւնն ու ցանկութիւնն:

Այսպիսով, մենք ուրվազծեցինք զբքի վրա աշ-
խատելու պլանը կամ սխեման:

Ի հարկե, այդ պլանը կարելի չե վորոչ չափով
ձեւափոխել, մի փոքր այլ կերպ ձեւակերպել հարցերը:
Մաթեմատիկայի, բնադիտութեան և այլ դրքերի վե-
րաբերմամբ հաճախ դործադրելի կլինի սխեմայի
միայն մի մասը: Սակայն կարեւոր է, վորպեսզի լինի
վորոշակի սխեմա, վորովհետեւ այդ դեպքում աշխա-
տանքը կլինի շատ ավելի արդյունավետ: Աշխատանքի
սխեմանն ունի հսկայական նշանակութիւն: Հաճախ
դա մարդուն հնարավորութիւնն է տալիս տեսնելու
այն, ինչ ուրիշները չեն նկատում: Նապոլեոնը, օրի-
նակ, ստուգատեսի ժամանակ միշտ նկատում եր զին-
վորների համադրեստի վրա յեղած ամենափոքր պա-
կասութիւնները, վորոնք ստուգատեսից առաջ ուշի-
ուշով վորոնում և չեյին գտնում սպաները: Բանն այն
է, վոր Նապոլեոնն ուներ վորոշակի սխեմա, վորով
նա դիտում եր զնոցերը. այդ սխեման ել հինց նրան
հնարավորութիւնն եր տալիս նկատելու բոլոր թերու-
թիւնները:

Տեսնենք, թե միևնույն առարկային ինչպես են
մտանում զանազան մասնագետները. նրանցից յուրա-
քանչյուրն ունի դիտելու իր սխեմա: Նկարիչը, օրի-
նակ, դիտելով բույսը, այն տեսնում է վորոչ սխեմա-
մով, վորի մեջ մտնում են զույնների զուգակցումը,
նրանց պայծառութիւնը, լուսավորութիւնը, ձևերի
նրբութիւնը: Բույսը դիտելով, նկարիչը կարող է
բոլորովին ուշադրութիւնն չդարձնել այն բանի վրա,

թե քանի՞ պսակաթերթ ունի ծաղիկը և ին՞չպես են
էրանք դասավորված: Այդ հարցը բոլորովին չի մըա-
նում նրա դիտողութեան սխեմայի մեջ: Բուսաբանն՝
ընդհակառակը, ամենից առաջ ուշադրութիւնն կը դարձ-
նի այդ պսակաթերթերին, տերևների դասավորու-
թեանը և այլն, ու վարող է ամենևին հնկատել, թե
տվյալ մոմենտին ինչպես է լուսավորված ծաղիկը և
նա ինչպես է յերեւում այս կամ այն ֆոնի վրա:

Ընչա այդպես ել զբքերի ընթերցանութեան ժա-
մանակ զբքին մոտենալու վորոշակի սխեմանն ունի
հսկայական նշանակութիւն: Դա հնարավորութիւնն է
տալիս զբքի մեջ նկատելու այն, ինչ կարելի չե և
հնկատել, յեթե նպատակ չես դնում տեսնելու դործի
հնց այդ կողմը: Գրքի նկատմամբ վորոշակի մոտե-
ցումն աստիճանաբար դառնում է սովորութիւն:

Գրքից մենք քաղում ենք գիտելիքներ, ուսումնա-
սիրում ենք ուրիշների փորձը: Յեզ այդ գիտելիքները
մեր կողմից շատ ավելի լավ կյուրացվին, յեթե մենք
զբանք ստուգենք մեր սեփական փորձով:

Ահա թե ինչու «սպրած», զանազան մարդկանց,
զանազան բարքեր ու սովորութիւններ տեսած մար-
դը հաճախ կյանքը ճանաչում է դուրս շատ ավելի
լավ, քան մեկ ուրիշը, վորը չափազանց շատ բան է
կարդացել, բայց չունի անձնական դիտողութիւնների
վորեւ պաշար: Ի դուր չե, վոր մենք հատկապես զնա-
հատում ենք «փորձված» բժիշկին, «փորձված» ման-
կավարժին և այլն:

Ուստի, չափազանց կարեւոր է, վորպեսզի ինքնա-
կրթութեամբ զբաղվողն աշխատի զբքից ձեռք բեր-
ված գիտելիքներն ստուգել անձնական դիտողութիւն-
ների միջոցով:

Այս տեսակետից հատուկ նշանակութիւնն է ստանում դըլոգատնտեսական արդյունաբերական թանգարաններ ու ցուցահանդեսներ, որինակելի ամտեսութիւններ ու ձեռնարկութիւններ այցելելը: Ամեն տեսակ եքսկուրսիաները պետք է լայնորեն դործադրվեն: Անհրաժեշտ է միայն, վոր այդ եքսկուրսիաները կազմակերպված լինեն դործնական ձևով և չվերածվեն սոսկ զվարճալի դրոսանքների: Հարկավոր է եքսկուրսիաների ժամանակ նշումներ կատարել իր համար, իսկ ով կարող է թող կատարի նաև նկարներ, գրի իր տղալորութիւնները: Պետք է նաև ողտադործել ամեն մի հնարալորութիւն՝ ճանապարհորդելու, լինելու նոր վայրերում, տեսնելու և դիտելու նոր մարդկանց, նրանց աշխատանքն ու կյանքը: Իայց աորոյա կյանքը ևս հարուստ նյութ է տալիս զիտողութիւնների համար, ուսումնասիրութիւն համար: Հարկավոր է միայն հաշիվ տալ, թե ինչ ես ուզում դիտել, ինչ նպատակով և ապա զիտողութիւնները հասցնել մինչև վերջ, նրանցից անել հետևութիւններ:

ՏՆՏԵՍԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՎ ՅԵՌԱՆԴԸ

Մենք դիտենք, վոր ամեն մի աշխատանքի մեջ պետք է խնայել, տնտեսել իր և ուրիշի ժամանակը, այսինքն խնայել և՛ իր, և՛ ուրիշի ուժերը, անտեղի չվատնել դրանք: Իր և ուրիշի ուժերը, իր և ուրիշի ժամանակը խնայել կարողանալն ամեն մի աշխատանք դարձնում է շատ ավելի արտադրողական:

Մենք դիտենք, թե ինչպիսի նշանակութիւնն ունի ժամանակի և յեռանդի տնտեսումը Փարբիկայում, արհեստանոցում կատարվող աշխատանքի ժամանակ, դաշտում կատարվող աշխատանքի ժամանակ—Ֆիզիկական աշխատանքի ամեն մի բնագավառում:

Մեր խորհրդային յերկրում, վորտեղ աշխատանքը կատարվում է վոչ թե դործատեր—կապիտալիստի ու կարվածատիրոջ համար, այլ ընդհանուր դործի համար, չափազանց շատ բան է ձեռք բերված աշխատավորների ուժերն ու ժամանակը խնայելու դործում:

Նույնը, ինչ վերաբերում է Ֆիզիկական աշխատանքին, վերաբերում է նաև մտավոր աշխատանքին: Մտավոր աշխատանքով պարապելիս նույնպես, պարապմունքների հաջողութիւնն զգալի չափով կախված է ժամանակի և ուժերի ճիշտ բաշխումից:

Իր և ուրիշի ուժերն ու ժամանակը խնայել կարողանալն ինքնակրթական հաջող աշխատանքի պայմաններից մեկն է:

Ինքնակրթական աշխատանքի մեջ ժամանակի և ուժերի տնտեսում կատարելու համար պետք է .

ա) ճիշտ դասավորել իր ժամանակը .

բ) իրեն համար ստեղծել աշխատանքի առավել նպաստավոր պայմաններ .

գ) տիրապետել դրքի վրա աշխատելու համար անհրաժեշտ ունակություններին .

դ) ճիշտ ընտրել պարտավորւնքների նյութը .

ե) ճիշտ դասավորել աշխատանքը .

զ) ուժերի և ժամանակի տնտեսման տեսակետից մշակել կոլեկտիվ աշխատանքի ձևեր .

է) իր տրամադրութեան տակ ունենալ անհրաժեշտ ձեռնարկներ և ցուցումներ .

ՃԻՇՏ ԴԱՍԱՎՈՐԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր, յեթե մենք ուզում ենք արտադրողաբար ննցկացնել ժամանակը, պետք է միշտ դասավորենք այն :

Իսկ ինչպես ենք մենք սովորաբար ծախսում ժամանակը :

Միայն դործարանում, ֆաբրիկայում կամ հիմնարկում ենք մենք աշխատում ժամերով : Իսկ մնացած ժամանակը ծախսվում է ինչպես պատահելի կամ զալիս է ծանոթներից մեկը և ժամանակն անցկացնում ես զրուցելով, կամ ուղղակի պառկում ես մահճակալի վրա մի հիմար վեպ ձեռքիդ : Ուշ յերեկոյան դիտի յես ընկնում, վոր ժամանակդ իզուր է անցել, ձեռքդ ես վերցնում մի վորեւէ դործնական դիրք, պարզվում է, վոր արդեն հողնել ես ջափից դուրս, հարկ է լինում քունը փախցնել ծխելու միջոցով . դիրքը դրվում է մի կողմը, սկսվում է խոսակցությունը վորեւէ ընկերոջ հետ կամ վեճեր, վորոնք շարունակվում են համարյա մինչև առավոտ : Իսկ առավոտյան դժվարութեամբ ես արթնանում, քեզ զգում ես ամբողջապես ջարդված :

Պետք է դիտենալ ժամանակի գինը : Գիտնականները, գրականագետները, պրոֆեսորները սովորություն ունեն ժամանակին պառկել քնելու, արթնանալ վաղ, առավոտյան ժամերին աշխատել թարմ գլխով,

Նրանք ժամանակը դասավորում են խտորեն: Նրանց մոտ մեկ ընդմիջտ սահմանված են արթնանալու, աշխատանքի, ճաշի, հանգստի, քնի ժամերը: Դրա հետևանքով աշխատունակութունը չափից դուրս աճում է:

Հետաքրքիր է ծանոթանալ, թե իրենց ժամանակն ինչպես էյին դասավորում խոշոր գիտնականները, գրողները:

Վերցնենք որինակ լեվ Տոլստոյին: Նա գրում էր վեպեր, վիպակներ ու պատմվածքներ, այն, ինչ թվում է, թե ամբողջապես կախված է տրամադրությունից: Մինչդեռ նրա ժամանակը խտորեն դասավորված էր: Առավոտները նա գրում էր, լարված աշխատելով, մի քանի անգամ վերապիտխելով միևնույն բանը: Գրողը չի կարող ապրել մեկուսացած. նա պետք է մշտապես տեսնի մարդկանց, գիտի, ուսումնասիրի նրանց: Յեվ Լ. Տոլստոյը վորոշ քանակությամբ ժամեր հատկացնում էր մարդկանց հետ խոսակցություն ունենալու, ընթերցանություն համար և այլն:

Ծիշտ այդպես էր աշխատում նաև Փրանսիական վիպասան Զոլլան, վորը դրել է հսկայական քանակությամբ վեպեր, վորոնք բնութագրում են հասարակության զանազան խավերի կյանքը կապիտալիզմի որով: Զոլլան արթնանում էր առավոտյան ժամը 6-ին և, ինչպես Տոլստոյը, գրում էր առավոտյան ժամերին, մնացած ժամանակը ծախսելով հասարակության այն խավերի ուսումնասիրման համար, վորոնց նա նկատարում էր:

Վերցնենք մեծ յերափիշտների, որինակ Բեթհովեն-

նի կյանքի նկարագրությունը և դուք կտեսնեք, թե նա ինչպիսի հսկայական քանակությամբ ժամանակ էր ծախսում դաշնամուրի վրա նվագելու համար և թե նա ինչպես խտորեն էր դասավորում իր ժամանակը:

Իրենց ժամանակն էլ այլևի խտորեն են դասավորում բնագետները, բժիշկները, գիտնականները, վորոնք աշխատում են լաբորատորիաներում՝ միկրոսկոպի վրա, անատոմիկական թատրոնում: Կարդացեք որինակ Եդիսոնի, Լույի Պաստերի և մաքի այլ ակադեմիկոս գործիչների աշխատանքի մասին և դուք կտեսնեք, թե նրանք ինչպես խտորեն էյին դասավորում իրենց ժամանակը, ինչպես էյին խնայում յուրաքանչյուր րոպեն:

Հայտնի վիրաբուժ Կոխերը, նույնիսկ ծերության հասակումն էլ ամենայն խտությամբ դասավորում էր իր օրը, վորոշ ժամի պառկում էր քնելու, ամեն օր վորոշակի ժամի թենիս էր խաղում, վորպեսզի պահպաներ ձեռքի ամրությունը վիրահատությունների ժամանակ և այլն:

Յեվ այդպիսի որինակներ դուք կգտնեք հազարներով: Նա, ով ուզում է հասնել լավ արդյունքների, պետք է ամենայն խնամքով խնայի ու դասավորի իր ժամանակը:

ՍՏԵՂԾԵԼ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍ- ՏԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վորպեսզի աշխատանքը ճիշտ ընթանա, վորպեսզի տվելորդ ժամանակ, յեռանդ չծախսվի, հարկավոր է ստեղծել աշխատանքի համար հեռարավորին չափ նպաստավոր պայմաններ:

Ամենակարևոր պայմանը— դրսի թարմությունն է, հողնածության բացակությունը: Հողնած մարդն աշխատում է և՛ շատ ավելի դանդաղ, և՛ շատ ավելի վատ: Աշխատանքի ամենալավագույն ժամերն, է հարկե, առավոտյան ժամերն են:

Վորպեսզի ճիշտ և յեռանդուն աշխատի դրուխը, աշխատի ուղեղը, հարկավոր է վորպեսզի ճիշտ, համաչափ աշխատի սիրտը, իսկ դրա համար հարկավոր է թարմ ոդ: Չի կարելի աշխատել չափից դուրս տոթ կամ չոդ սենյակում: Պարսպմունքից առաջ անհրաժեշտ է բաց անել ոդանցքը կամ լուսամուտը, թարմացնել ոդը: Ծխով լցված կամ ծանր ոդով սենյակը ծայրահեղորեն բացասաբար է անդրադառնում պարսպմունքներին վրա:

Նպաստավոր պայման է հանդիսանում նաև ուշադրություն դրավող արտաքին տպավորություններին բացակայությունն աշխատանքի ժամանակ: Չի կարելի պարսպել, յերբ չուրջդ աղմկում են, խոսում, յերբ ամեն րոպե քեզ դիմում են վորնե, թեկուզ և փոքր

նշանակություն ունեցող հարցով: Անհրաժեշտ է հարգել ուրիշի հանդիստը և չաղմկել, չսուրել, չխոսել, յերբ մեկ ուրիշը պարսպում է: Պետք է իրեն սովորեցնել պարսպելու գրադարանում կամ ախումբում: Գրադարանում վոչ մի բան ուշադրությունը չի շեղում պարսպմունքից: Բացի դրանից, գրադարանում ձեռքի տակ կան ենցիկյուպեղիկ բառարաններ, ուղեցույցներ, ատլասներ, դասաղբեր, վորոնցից հարկ է լինում ոդտվել լուրջ ընթերցանության ժամանակ:

Ճիշտ է, յերբեմն մարդ կարող է պարսպել անասելի աղմուկի և իրարանցումի մեջ, բայց դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի գիրքը կամ աշխատանքն այն աստիճանի կլանի և դրավի նրան, վոր նա ի վիճակի լինի չնկատելու այն, ինչ կատարվում են շրջապատում: Հայտնի յե հունական գիտնական, հայտնի յերկրաչափ Արխիմեդի մասին պատմածը. նա այնքան է կլանված յեղել իր գծադրություններով, վոր յերբ նրա տունն է մտնում թշնամին և նրան մոտենում է գինյորը, նա միայն ասում է՝ «Ձեռք մի տուր իմ շրջաններին»: Վո՛չ ամեն մեկը և վո՛չ ամեն ժամանակ կարող է այդպես ամբողջութամբ կլանված լինել ուսումնասիրվող առարկայով, վորպեսզի չնկատի, թե ինչ է կատարվում շուրջը: Ուստի, շատ ավելի լավ է, յեթե արտաքին վոչ մի բան չի շեղում պարսպողի ուշադրությունը: Ի դեպ, պարսպմունքների հաջողության ժամանակ անհրաժեշտ է նաև, վորպեսզի ուշադրությունը չգրավեն կողմնակի մտքեր և վորպեսզի չառացվի այնպես, ինչպես Յեվդենի Ռենդինի մոտ, վորի մասին Պուչկինը գրում է՝

Նրա աչքերը կարողում էյին,
Բայց մտքերը գտնվում էյին հեռուն...»:

Ահա թե ել ինչու, ի միջի ալլոց, ալիւր լալ է պարսպել առաւոտները: Նախորդ որվա տպագրութիւնները գիշերվա ընթացքում վորոչ չափով թուլանում են, նոր տպագրութիւններ գեռես չկան ե վոչ մի բան առայժմ չի խանդարում հոգեկան հանդիստը: Յեթե չկա հարկ յեղած հանգստութիւնը և պարսպմունքի համար անհրաժեշտ տրամադրութիւն, պետք է աշխատել ստեղծել ալլալիսին. արագ անց ու դարձ անել սենյակում, վերհիշել մի հայտնի դեպք, մի յերկու եջ վարդալ սիրված հեղինակից կամ թե գործի դնել նման վորեւ ալլ պրիյոմ:

ՋԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վորպեսզի աշխատանքը հաջող ընթանա, **առերա-** ժեշտ է տիրապետել վորոչ ունակութիւններին, առանց վորի չի կարելի աշխատել գրքի վրա:

Այդպիսի ունակութիւնների թիւին է պատկանում կարդալ, գրել, թվական նյութի հետ վարվել, աշխարհագրական քարտեզ կարդալ կարողանալը և այլն:

Պետք է իր մեջ զարգացնել մտքում արագ կարգալու սովորութիւն, սեղմ, գործնական նշումներ կատարելու սովորութիւն, գրքին վորոչ հարցումներով մոտենալու սովորութիւն: Ինչու յե անհրաժեշտ էր մեջ զարգացնել այս սովորութիւնները: Նրա համար, վորպեսզի աշխատել առանց ժամանակի ու յեռանդի ալիւրդ ծախսման:

Մենք գիտենք, թե որինակ, հասակավոր անգրատ գետն ինչպիսի դժվարութիւններ է սովորում տառերը կապելը, կամ թե կիսագրագետի համար յերբեմն վորքան դժվար է լինում գրել իր ազգանունը, ինչպես յերկար ժամանակ նա ճգնում է և թե հաճախ ինչպիսի ջանք է նա գործադրում այդ ազգանունը գրելու համար: Պարզ բան է, վոր քանի գեռ այդ պրոցեսները կլանում են նրա ամբողջ ուշադրութիւնը, նա չի կարող կենտրոնանալ կարդացածի մտքի վրա: Բոլոր ուժերը ծախսվում են տեխնիկան հաղթահարելու վրա: Ահա՛ թե ինչու, անհրաժեշտ է իր մեջ զարգացնել վորոչ ունակութիւններ: Առանց դրան անհնարին են լուրջ պարսպմունքները:

ՃԻՇՏ ԸՆՏՐԵԼ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՆՅՈՒԹԸ

Քե ի՞նչ դեր ե խաղում նյութի ընտրությունը ժամանակի և եներդիայի տնտեսման տեսակետից, մենք արդեն ասացինք վերելում: Այստեղ անհրաժեշտ է միայն մի քանի խոսքով կրկնել արդեն ասացվածը:

Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել միայն այնպիսի աշխատանքի, վարն ուժից վեր չե—պետք է ձեռնամուխ լինել հատուկ դրքերի: Ձեռնամուխ լինել ուժից վեր դրքի, նշանակում է անտեղի ուժեր ծախսել և իզուր սպանել ժամանակը:

Ի հարկե, պետք է գիրքն ընտրել այն հարցերի վերաբերյալ, վորոնք հարկավոր են ուսումնասիրել, ամենալավագույն դրքերն առավել լիակատար, խորը և ճիշտ են լուսաբանում տվյալ հարցը: Յեվ, վերջապես, պետք է կարդալ սկսել առավել հետաքրքրող հարցի վերաբերյալ դրքերից, աստիճանաբար ընդարձակելով ուսումնասիրվող բնագավառը, ընդգրկելով հարակից կարևոր բնագավառները և այդպիսով բոլոր նոր ձեռք բերվող գիտելիքները կազմակերպել հիմնական կորիզի շուրջը:

ՊԱՐԱՊԵԼ ԸՍՏ ՊԼԱՆԻ

Հարկավոր է նաև իր մեջ մշակել վարոչակի, ցախապես նշված պլանով աշխատելու հմտություն: Պարամունքների մեջ քիչ փորձ ունեցող մարդը սովորաբար շատ է ցրվում, մեկ սխում է այս գիրքը, մեկ ուրիշը. մի թեմային ինչպես հարկն է չտիրապետած, ձեռնարկում է մյուսին: Պարամունքներին այդպիսի յեղանակը շատ քիչ է արտադրողական, շատ քիչ է շահավետ: Չպետք է այս ու այն կողմ նետվել, այլ իր առջ պետք է դնել վորոչակի ու կոնկրետ նպատակներ: Ասենք, թե մարդ ուզում է ուսումնասիրել կապիտալիզմի հարցը: Դա շատ լայն նպատակ է: Դրան հասնելու համար հարկավոր է այդ ընդհանուր թեման բաժանել մի շարք ավելի սահմանափակ թեմաների: Դրանցից ընտրել մեկը, ասենք ժամանակակից կապիտալիզմը: Այնուհետև հարկավոր է ե՛լ ավելի սահմանափակել նաև այդ թեման: Որինակ՝ սկսել ուսումնասիրել ժամանակակից կապիտալիզմը վորևէ մի յերկրում— ասենք Անգլիայում, այնուհետև ե՛լ ավելի հեռուն դնալ սահմանափակման ուղիով և ընտրել, ասենք, բանվոր դասակարգի դրության ուսումնասիրումն Անգլիայում՝ ժամանակակից կապիտալիզմի որոք: Տվյալ, կոնկրետ կերպով առաջադրված թեմային տիրապետելուց հետո միայն, կարելի յե անցնել հաջորդ հարակից կոնկրետ թեմային և դրան

ել տիրապետելուց հետո միայն գնալ առաջ: Այդ, թեմային բավականաչափ խորը կերպով տիրապետելու ամենաարդյունավետ յեղանակն է: Ի հարկե, վորպեսզի ի վիճակի լինել իր համար կազմելու այդպիսի պլան, պետք է ունենալ արդեն վորոշ, թեկուզ և ամենաընդհանուր պատկերացում այդ ամբողջ թեմայի վերաբերյալ:

Գրքի վրա աշխատել սկսողը պետք է իր առջև դնի մոտակա, իր ուժերին մատչելի նպատակներ: Միայն այդ յեղանակով նա կկարողանա հաղթահարել ընդհանուր խնդիրը:

Գրքի վրա նոր աշխատել սկսողի համար պլաններ կազմելը բավական դժվար գործ է, շնորհիվ այն բանի, վոր նա պարզ չի պատկերացնում այն նյութի ծավալը, վորը պետք է ուսումնասիրել, ինչպես նաև ընդհանուր թեմայի առանձին բաղկացուցիչ մասերը: Այստեղ նոր ընկերոջը պետք է ոգնուի թյան դան ընդհանուր թեմայի ավելի մոտիկից ծանոթ ընկերները, կամ թե համապատասխան ձեռնարկներն ու ուղեցույցները: Այս տեսակետից դանադան դասընթացների ունենդիրները գտնվում են ավելի նպաստավոր պայմաններում. նրանք, ինչպես գյուղացիներն են ասում, «ապրում է ուրիշի պարսպի հետևում»: Նրանց համար աշխատանքի պլան կազմում են դասընթացների դեկավարները: Այդ, ի հարկե, ավելի հեշտ է և վորոշ չափով ձեռնտու յե նոր պարսպել սկսողի համար— նա յենթակա չե սխալ ուղիով գնալու վտանդին:

ՀԱՄԱՏԵՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կանդ առնենք նաև հետևյալ հարցի վրա— ի՞նչպես է ավելի արդյունավետ պարսպելը՝ մենա՞կ, թե՞ կոլեկտիվ կերպով: Ամեն բան կախված է նրանից, թե ինչպես են կազմակերպվում պարսպմունքները:

Ինքնակրթությամբ մենակ պարսպել սկսողի համար հաճախ դժվար է լինում: Ուստի, ավելի լավ է իր համար ընտրել աշխատանքի ընկերակից, վորի հետ մշտապես կարելի յե մտքերի փոխանակություն կատարել, համատեղ քննարկել հարցերը: «Մեկ խելքը լավ է, յերկուսն առավել»: Կարևոր է, վորպեսզի նա ապրելիս լինի վոչ հեռու կամ թե աշխատելիս լինի նույն տեղում:

Հատկապես կարևոր է միասին քննության առնել այն հարցը, թե ի՞նչ կարգալ, միասին կազմել աշխատանքի պլանը, ստուգել, թե վորի աշխատանքն ինչպես է ընթանում, միասին քննարկել անհատականալի հարցերը, միմյանց ոգնել հաղթահարելու դժվարությունները: Շատ կարեվոր է միմյանց պատմել կարգացած նյութը: Այդ սովորեցնում է խոսել կարևոր, լուրջ հարցերի մասին, ստուգել իրեն, թե վորքանով է յուրացված կարգացածը: Պատահում է այսպես, կարողում են և թվում է, թե ամեն բան հասկացել են, իսկ յերբ վոր սկսում են սրտմեղ, տեսնում են, վոր վորոշ տեղեր հիշողությանդ մեջ չեն

մնացել, վորոչ տեղեր բավականաչափ պարզ չեն: Յերկուսով աշխատելն այս տեսակետից չափազանց շատ բան է տալիս:

Յերբ ինքնուրույն ընթերցանության աշխատանքը սովորություն կդառնա, շատ կարևոր է, վորպեսզի ինքնուրույն աշխատանքի ընկերներն սկսեն նշումներ կատարել, այսինքն վորպեսզի նրանցից յուրաքանչյուրն իր համար ունենա մի տեսար, վորտեղ համառոտակի դրի առնի, թե ինքն ինչ է ստացել ուսումնասիրվող հարցի վերաբերյալ կարգացած գրքերից ու թերթերից:

Յենթագրեանք, վոր նա ուսումնասիրում է միջագրային դրությունը: Կարգում է «Պրավդան»: Յեվ ահա նա իր տեսարի մեջ գրի յե առնում, վոր այսինչ որը «Պրավդա»-ում կարգացել է չինական պատերազմի մասին: Նա գրի յե առնում վոչ թե ամբողջը, այլ ամենաեյականը, ամենակարևորը: Յեթե կարգացած նյութի մեջ նրան մի վորևե բան հատկապես հետաքրքրում է, հուզում, — այդտեղից կարելի յե քաղվածք կատարել: Փորձը ցույց է տալիս, վոր այդպիսի տեսարեր ունենալը շատ է ոգնում հարցն ըմբռնելուն, ոգնում է հասկանալ թերթի մեջ գրվածը, ավելի էյականը տարբերել պակաս չափով էյականից:

Նրանք, ովքեր ուսումնասիրել են Լենինին, գիտեն, թե նա վորքան շատ քաղվածքներ էր կատարում իր կարգացած թերթերից ու գրքերից, ինչպիսի արժեքավոր դիտողություններ էր կատարում լուսանցքներում, ինչպես էր ընդգծում ամենակարևոր ու հետաքրքիր միտքը:

Յեթե ինքնակրթությամբ պարապող ընկերներն

ուրեքնան քաղվածքների տեսարակ, և ապա, ասենք, յուրաքանչյուր յերկու վեցորյակը մեկ անդամ միմյանց ցույց տան իրենց կատարած նշումները, այդ չափազանց շատ բան կտա նրանց, նրանց ուշագրությունը կկենտրոնացնի մի շարք նոր հարցերի վրա:

Այժմ ուսերեն լեզվով թարգմանված են Մարքսի և Ենգելսի նամակագրությունները: Մարքսը և Ենգելսը, ինչպես հայտնի յե, յերկար տարիներ դիտական աշխատանքի համընկերներ էյին: Այդ նամակագրությունը շատ վառ կերպով ցույց է տալիս, թե ինչպես համատեղ աշխատանքն ոգնում էր մարքսիզմի մեծ հիմնադիրներին, թե ինչպես նրանք խորհրդակցում էյին միմյանց հետ, աշխատանքի մեջ ոգնում էյին միմյանց:

Համատեղ աշխատանքն ոգնում է վոչ միայն մեծ, մարդկանց, մեծ դիտնականներին, այն ոգնում է նաև շարքային աշխատողներին ու նրանց, ովքեր իրենց հանրակրթական դիտելիքների շրջանը լրացնում են ինքնուրույն աշխատանքի, ինքնուրույն ընթերցանության միջոցով:

Պատահում է այնպես, վոր վոչ միայն յերկու ընկերներով են համատեղ աշխատում իրենց ինքնակրթության վրա, այլ պատահում է, վոր միևնույն հարցով հետաքրքրվող մի քանի ընկերներ միանում են, այդ հարցը համատեղ աշխատանքի միջոցով ուսումնասիրելու համար:

90-ական թվականներին Պիտերում կազմակերպվեցին Մարքսի և Ենգելսի յերկերն ուսումնասիրող խմբակներ: Յուրաքանչյուրն աշխատում էր ինքնուրույն կերպով, կարգում էր, իր համար քաղվածքներ էր կատարում, խմբակում քննարկման էր դնում ի-

ՈԳՏՎԵԼ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻՑ ՅԵՎ ՈՒՂԵ- ՑՈՒՅՑ ՆՅՈՒԹԻՑ

Բայց անկախ նրանից, աշխատանքը կատարվում է կոլեկտիվ, թե ինքնուրույն, վորպեսզի այդ աշխատանքը չպահանջի ավելորդ ժամանակի ու եներգիացի ծախսում, անհրաժեշտ է, վոր սովորողի տրամադրություն տակ լինեն մի շարք անհրաժեշտ ձեռնարկներ և ուղեցույցներ, վորոնք ոգևում են աշխատանքը դնել նիշտ ուխտերի վրա: Անհրաժեշտ են բառարաններ, ընթերցանության համար առավել կարևոր գրքերի հանձնարարական գրացուցակ, վորի մեջ մատնանշված լինի, թե ի՞նչ է տալիս յուրաքանչյուր գիրք, ինչ՞պիսի պատրաստություն է հարկավոր այն կարգալու համար, և այլն: Պետք է լայնորեն օգտվել թերթերում և ժուռնալներում տպագրվող կոնսուլտացիաներից: Այդ ձեռնարկների առկայությունն ինքնակրթությանը պարագոյնների աշխատանքը կդարձնի շատ ավելի արտադրողական:

Շատ լավ է հնարավորության դեպքում օգտվել հեռակա կրթության դասագրքերից, վորոնք բոլոր յուրաքանչյուրի հանդիսանում են հեռակա կոնսուլտացիա և չափազանց լավ ողնում են յուրացնել նշված դասընթացը:

«Միայն և կարծել, թե թեորիային տիրապետելու

ինդիքն աշխատողների միայն վոչ մեծ շրջանի ուժերին և ներքին: Մարքս-լենինյան թեորիային տիրապետելը ձեռքբերվող գործ է: Հենց այժմ, Սորհրդային իշխանության և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի որով ստեղծված են անսահմանափակ հնարավորություններ, վորպեսզի մեր ղեկավար կազմերը հասնողություններ տիրապետեն մարքս-լենինյան թեորիային, ուսումնասիրեն կուսակցության պատմությունը, Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները: Մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելու համար հարկավոր է միայն յերեվան բերել ցանկություն, հաստատակամություն և բնավորության սմբություն՝ այդ նպատակին հասնելու գործում: Յեթե կարելի չէ հասնողություններ տիրապետել այնպիսի գիտությունների, ինչպես որինակ՝ Ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, ապա առավել ևս հիմք չկա տարակուսելու, վոր կարելի չէ լիովին տիրապետել մարքսիզմ-լենինիզմի գիտությունը»: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը՝ «Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին» «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» լույսը ընծայման կապակցությամբ»:

Այնուհետև այդ վորոշման մեջ ասված է. «կազմերին մարքսիզմ-լենինիզմ սովորեցնելու հիմնական մեթոդը պետք է հանդիսանա բոլշևիկյան կուսակցության պատմությունը և թեորիան ինքնուրույն կերպով ուսումնասիրելու մեթոդը, վորը ստեղծված է բոլշևիկների ավագ սերնդի փորձով...»:

Մարքսիզմ-լենինիզմի ինքնուրույն կերպով ուսումնասիրելու այդ մեթոդը տիրապետելը, մեր կազմերի կարևորագույն խնդիրն է: Տիրապետել բոլշևիզ-

մին— ահա՛ թե ինչ է մեզ հարկավոր նրա համար,
վորպեսզի ե՛լ ավելի հաջողութեամբ պայքար մղենք
հանուն կոմունիզմի:

ԱՅՈՒԳԻՉ ԿԱՐՑՆԵՐ

1. Ինչ՞պես պետք է աշխատել գրքի վրա, վոր-
պեսզի ավելի լավ յուրացնել նրա բովանդակութեանը:

2. Ի՞նչպիսի ունակութեաններ են անհրաժեշտ,
վորպեսզի ինքնուրույն ուսուցումն ընթանա հաջո-
ղութեամբ:

3. Ի՞նչպես քաղվածքներ կատարել կարգացած
գրքերից և ի՞նչն է հարկավոր գրի առնել:

4. Ի՞նչպիսի իրադրութեանը, ինչպիսի պայման-
ներն են ամենից ավելի նպաստավոր ինքնուրույն ու-
սուցման համար:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Ինքնուրույն ուսուցման մասին	4—10
2. Խորհուրդներ ինքնակրթութեամբ պարա- պել սկսողներին	11—14
3. Ինչպես աշխատել գրքի վրա	15—22
4. Տնտեսել ժամանակը և յեռանդը	23—24
5. Ճիշտ դասավորել ժամանակը	25—27
6. Ստեղծել ուսուցման համար նպաստավոր պայմաններ	28—30
7. Ձևք բերել անհրաժեշտ ունակութեաններ	31—
8. Ճիշտ ընտրել պարապմունքների նյութը	32—
9. Պարապել ըստ սլանի	33—34
10. Համատեղ ուսուցման մասին	35—39
11. Ուղտվել ձեռնարկներից և ուղեցույց նյութից	40—41
12. Ստուգիչ հարցեր	42—



Խմբագիր՝ Գ. ԶՈՀՐԱԲՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գլավլիտի լիազոր Ե-1145.տիրաժ 2200 պատ. № 517

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ի հրատարակչություն

«Խորհրդային Հայաստան»-ի տպարան, Ֆերևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0938272

ЭРГ

1

3866

Н. К. Крупская

**КАК САМОСТОЯТЕЛЬНО РАБОТАТЬ
НАД КНИГОЙ**